

ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Երևան

Մեծահարգ Տիար Նախագահ,

Վստահ ենք, որ ծանոթ են Ձեզ, Մեր վիշտն ու ցավագին ապրումները, ի տես այս վերջին երեք-չորս տարիների ողբերգության, որոնց զոհ է գնում Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը, պարզապես որովհետև արդար երազանքը ունի ազատ ու ինքնիշխան ապրելու, բարեկամական հարևանությամբը ադրբեջանյան ժողովրդի:

Դժբախտաբար այն ժամանակ ստեղծված պայմանները և ոչ արդարացի դիրքորոշումները Կենտրոնական կառավարության կողմից փոխանակ Ղարաբաղի հայ ազգաբնակչության ազատ ինքնորոշման ճանապարհը բացելու, ընդհակառակը, հակամարտության և թշնամանքի վիճակ ստեղծեցին երկու հարևան ազգությունների միջև, որը վերածվեց մի ահավոր ողբերգության: Ողբերգություն, որ շարունակվում է և սպառնում է շարունակվել:

Մեզ համար միխիթարական եղավ անցյալ տարի, փետրվար ամսին, հանդիպում ունենալ Ցվեյցարիայում, Մոնթրյո քաղաքում, և ապա Մոսկվայում՝ Ադրբեջանի հարգարժան Ցելիխ ալ Իսլամ Փաշազադեի և նրա պատվիրակության հետ, երբ համախորհուրդ հրապարակեցինք մի կոչ՝ ուղղյալ հակամարտ ուժերին, խնդիր դնելով, որ կողմերը դադարեցնեն ռազմական գործողությունները, և պատրաստվի գետին՝ երկու կողմերի բանակցությանց, գտնելու համար մի արդար ու խաղաղ լուծում:

Ցավոք սրտի մեր կոչը գործնական արդյունք չունեցավ, և մինչև այսօր շարունակվում են ռազմական գործողությունները գրեթե բոլոր ճակատներում, խլելով մեծ թվով զոհեր ու վիրավորներ թե՛ Ղարաբաղը պաշտպանող հայ ազատամարտիկներից և թե՛ ադրբեջանցիներից:

Այս կացության առջև Մեզ համար միխիթարական եղավ ստանալ Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցու Պատրիարք Ալեքսեյ Բ-ի 24 փետրվար 1994 թվակիր նամակը, որով հրավեր կուղղվի Մեզ, որ ի խնդիր ղարաբաղյան հարցի խաղաղ լուծման, հանուն Հայաստանյայց Եկեղեցու, կոչեր ուղղենք հակամարտող կողմերի ղեկավարությանց՝ հույս ունենալով, որ Մեր աղոթքները և առաջադրանքները կարող են բարերար նպաստ բերել, վերջ տալու համար ներկա ողբերգությանց:

Ահա այս պարտականությունն ենք կատարում Մենք, հղելով Ձեզ և մեր հայրենի կառավարությանը, մեր այս գիրը՝ կոչ անելով Ձեզ, Պրն. Նախագահ, որ Ձեր հեղինակավոր դիրքերից, Ձեր միջնորդությունը ի գործ դնեք՝ նպաստելու ղարաբաղյան ցավոտ հարցի խաղաղ լուծման: Կարծում ենք, որ այս է նաև իղձը մեր հայրենաբնակ վշտահար ժողովրդի:

Ի սրտե մաղթում ենք Ձեզ և Հանրապետության կառավարությանն ու խորհրդարանին հայրենաշեն եռանդ ու ազնիվ ներշնչանքներ՝ հասնելու համար խաղաղության նավահանգիստը:

Օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
28 փետրվար 1994 թ.